



ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

Պեյրուօ, 28 Հոկտեմբեր 2010

Դիւան թիւ 255/10

Տիկին Հրանուշ Յակոբեան
Սփիւոքի նախարար
Հայաստանի Հանրապետութեան
Երեւան- Հայաստան

Ազնուափայլ տիկին,

Կը շնորհաւորենք ձեզ՝ ձեր ղեկավարած գերատեսչութեան կողմէ Արցախեան մայրաքաղաքին մէջ հրաւիրուած լրատուամիջոցներու համահայկական խորհրդաժողովին բացման առիթով, որ կու գայ գեղեցիկ էջ մը եւս աւելցնելու այն ազգաշահ իրագործումներուն շարքին, որոնք արձանագրուեցան Սփիւոքի նախարարութեան կողմէ անցնող երկու տարիներուն:

Բարձրօրէն կը գնահատենք ձեր գործադրած ջանքերը՝ Հայրենիք-Սփիւոք յարաբերութիւններու խորացման ուղղութեամբ, որուն մէջ հայ մամուլին, բնականաբար, վիճակուած է կարեւորագոյն դերակատարութիւն: Կը մաղթենք, որ ստեփանակերտեան խորհրդաժողովը նպաստէ այդ դերակատարութեան բիրեղացման՝ յօգուտ համայն հայութեան:

Ինչպէս առիթ ունեցանք վերջերս ըսելու Հայ Կաթողիկէ լրատուամիջոցներու համագումարի մասնակիցներուն՝ որեւէ լրագրող, եւ ընդհանրապէս որեւէ հաղորդակցութեան միջոց օգտագործող, պարտի միշտ փնտռել ճշմարտութիւնը՝ անկախաբար անձնական շահէ, պարտի աճեցնել անհատին արժանապատուութիւնը եւ հաստատօրէն աշխատիլ ընդհանուրին բարիքին համար: Այս երեք սկզբունքները, զուգուած՝ քրիստոնէական վկայութեան հետ, կը կազմեն հիմնական մեկնակէտերը եւ ուղենիշները քրիստոնէայ լրագրողին, որ կը դիմագրաւէ բազում մարտահրաւերներ, համաշխարհային յարափոփոխ պայմաններուն մէջ արժանապատուօրէն իր առաքելութիւնը կատարելու: Կը ցանկանք, որ ալեկոծ այս աշխարհին մէջ, շատ յաճախ խաբուսիկ եւ ստապատիր լուրերուն դիմաց, մամուլը կարենայ ներկայացնել ճշմարիտ աշխարհը, զոր Քրիստոս կը սիրէ ու կը հոգայ, բացայայտ կեանքը

խոչընդոտող արգելքները, ցոյց տայ զանոնք յաղթահարելու միջոցները եւ մարդոց փոխանցել ճշմարտութեան յուսադրիչ լոյսը:

Ազգային գետնի վրայ, հայ լրագրողը, վերոյիշեալ սկզբունքներուն հաւատարիմ մնալու կողքին, ունի նաեւ պարտականութիւնը անկեղծ մասնակիցը դառնալու իր հայրենիքի կայացման եւ մեր աշխարհասփիւռ ժողովուրդի դիմագրաւած խնդիրներու լուծման գործին: Լայնախոհութիւնը, փոխադարձ հանդուրժողականութիւնը, առարկայականութիւնը եւ գործակցութեան ոգին կարեւոր յատկանիշներ են այդ նպատակներուն հասնելու համար. եւ ամենառաջինը հայ մամուլն է, որ պարտի ամրապնդել եւ պաշտպանել այս յատկանիշները՝ իր գործունէութեան ընթացքին՝ հայութեան հանրային եւ քաղաքական կեանքին մէջ:

Այս առիթով, անգամ մը եւս մեր օրհնութիւնը կը բերենք հայրենի պետութեան եւ ձեր նախարարութեան, հայութեան ընդհանրական նպատակներուն ուղղութեամբ գործադրուող եւ գործադրուելիք ձեր բոլոր ջանքերուն մաղթելով յաջողութիւն՝ ի փառս Հայաստանին եւ հայութեան՝ ի Հայրենիք եւ ի սփիւռս աշխարհի:

Հայրական Օրհնութեամբ՝

+ Ընդամբն Պետրոս ԺԹ.

+ Ներսէս Պետրոս ԺԹ.

Կաթողիկոս Պատրիարք

Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց